ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«22»«Դեկտեմբերի»2015Թ ԼՄԱՀ № 154

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Պ-ՐՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Տեխնիկական խնդիրների պատճառով կրկին անգամ Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու 15.12.2015թ – ի թիվ 048, 049-Ն, 50-Ն, 51-Ն, 52-Ն, 53-Ա, 54-Ն որոշումները:

Առդիր՝ 12 թերթ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015 թվական № 048

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015թ – Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 – Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արևաշող համայնքի ավագանու 2015թ – ի Դեկտեմբերի 15 – ի նիստի օրակարգը

Օրակարգ
Արևաշող համայնքի 2015թ – ի Դեկտեմբերի 15 – ի նիստի

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՈՏԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՍՄԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ
4. ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ –Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱԴԱՄՅԱՆ Ա. Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա.			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ. Վ.			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ. Ն.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Ս.			

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 Դեկտեմբերի 2015 թ. N 049-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 – րդ, 8-րդ, 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Արևաշող գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևաշող գյուղական համայնքի տարածքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱԴԱՄՅԱՆ Ա. Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա.			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ. Վ.			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ. Ն.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Ս.			

Համայնքի ղեկավար՝ _____ /Պ. Պապիկյան/

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Արևաշող գյուղական համայնքի ավագանու
2015թ. Դեկտեմբերի 15 -ի թիվ 49-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 (ինը հազար) ՀՀ դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ.

3001-ից և ավելիս քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 (ինը հարյուր) ՀՀ դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 (ինը հարյուր) ՀՀ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 (երեսուն հազար) դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 6000 (վեց հազար) ՀՀ դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածած առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.
6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 (հիսուն հազար) դրամ:
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ.
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.
   3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.
   4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 (հինգ հարյուր) հազար ՀՀ դրամ.
   5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ.
   6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.
   2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ.
   3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.
   4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 (յոթ հարյուր) դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 0 (զրո) ՀՀ դրամ:

   Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 0 (զրո) դրամ:
12. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
    1) 3 հա – ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ
    2) 5 հա – ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ
    3) 7 հա – ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 70000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ
    4) 10 հա – ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար 10000000 (տաս միլոն) ՀՀ դրամ
13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 10000 (տաս հազար) ՀՀ դրամ:
14. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
15. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
16. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար 0 (զրո) ՀՀ դրամ:
17. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար 0 (զրո) ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ /Պ. Պապիկյան/

15 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ 50 – Ն

15 Դեկտեմբերի 2015թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՈՏԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 18 – րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 – րդ հոդվածով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի տարածքում արոտի վարձավճարը սահմանել համապատասխանաբար
   1) Մեկ կովի համար----1400(մեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ
   2) Մեկ մոզու (երինջի) համար 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ
   3) Մեկ ցուլի (հորթի) համար 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ
   4) Մեկ ոչխարի (այծի) համար 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ
2. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ավագանու 16.12.2013թ – ի թիվ 30 - Ն որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
ԱԴԱՄՅԱՆ Ա.Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ.Վ			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ.Ն			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ.Մ			

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«15» Դեկտեմբերի 2015թ № 51 -Ն

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ գ. Արևաշող,
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՍՄԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 19 – րդ կետով՝ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60 – րդ և 72 – րդ հոդվածներով

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արևաշող համայնքի «ՀԱՍՄԻԿ» Նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող համայնքի բնակիչների երեխաների սննդի համար երեխաների ծնողներից գանձվող ամսական գումարի չափը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
2. Արևաշող համայնքի «ՀԱՍՄԻԿ» Նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող սակայն համայնքի բնակիչ չհանդիսացող երեխաների սննդի համար երեխաների ծնողներից գանձվող ամսական գումարի չափը սահմանել 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ավագանու «ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՍՄԻԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ» 2014թ – ի նոյեմբերի 28 – ի թիվ 27 – Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ – ի Հունվարի 1 – ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱԴԱՄՅԱՆ Ա. Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա.			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ. Վ			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ. Ն.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Ս.			

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«15»Դեկտեմբերի 2015թ № 52-Ն

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ գ. Արևաշող,
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 – րդ հոդվածով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Արեվաշող համայնքում խմելու ջրի վարձավճարը սահմանել՝

1. Խմելու ջրի ծորակ ունեցող յուրաքանչյուր տնտեսության համար ընթացիկ տարվա համար 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
2. Ծորակ չունեցող սակայն թաղային կամ հարևանի ծորակից օգտվող տնտեսության համար սահմանել խմելու ջրի վարձավճարի զեղջ 50%:
3. Սպիտակ քաղաքի ջրմուղից օգտվող տնտեսություններին ազատել խմելու ջրի վարձավճարից:
4. Համայնքից երկարաժամկետ բացակայող տնտեսություններին համարել ազատված խմելու ջրի վարձավճարից համայնքի ջրմուղից չօգտվելու համար:
5. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ավագանու 28.11.2014թ – ի « 2015 ԹՎԱԿԱՆԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 28-Ն որոշումը:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ – ի հունվարի 1 – ից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱԴԱՄՅԱՆ Ա. Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա.			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ. Վ.			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ. Ն.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Ս.			

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

Հավելված
Արևաշող համայնքի ավագանու
2015թ-ի Դեկտեմբերի 15-ի թիվ 53 - Ա որոշման

ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորների թիվը	Պաշտոնական դրույքաչափը (հազար) հհ դրամ
1.	Համայնքի ղեկավար	1	302.0
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	100.0
3.	աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	203.0
4.	առաջատար մասնագետ – հաշվապահ (3.1-1)	1	190.0
5.	առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)	1	190.0
6.	առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1)	1	176.0
7.	երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1)	1	123.0
8.	երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-2)	1	123.0
	Տեխսպասարկման անձնակազմ		
9.	Վարորդ	1	131.0
10.	Սանտեխնիկ	1	73.0
11.	Սանտեխնիկ	1	88.0
12.	Սանտեխնիկ	1	88.0
13.	Հավաքարար	1	88.0
14.	պայմանագրային աշխատող (մշակույթի գծով)	1	100.0
	ընդամենը	14	1'975'000

Արևաշող համայնքի ղեկավար՝ _____ **Պ. Պապիկյան**
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ 53 – Ա

15 Դեկտեմբերի 2015թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26 – րդ մասով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 – րդ հոդվածով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արևաշողի գյուղապետի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողներին վճարել պաշտոնային դրույքաչափի 5 % - ի չափով հավելավճար:
3. Ուժը կորցրած ճանաչել Արևաշող համայնքի ավագանու 2015 թ-ի Հունիսի 30 – ի «ԱՐԵՎԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 24 – Ա որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016թ – ի Հուվարի 1 – ից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
ԱԴԱՄՅԱՆ Ա.Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ.Վ			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ.Ն			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ.Ս			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արևաշող համայնք,
հասցե Լոռու մարզ
գ. Արևաշող, 1 Փ. 105
Հեռախոս (0255) 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ 54 – Ն

15 Դեկտեմբերի 2015թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ –Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 – րդ հոդվածի 5 – րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Լոռու մարզի Արևաշող համայնքի 2016թ – ի բյուջեն
   1. Եկամտային մասով՝ վարչական մասով՝ 60562,8 հազ.դրամ
   2. Ֆոնդային մասով՝ 0 հազ, դրամ
   3. Ծախսային մասով՝ վարչական մասով 57362,8 հազ. դրամ
   4. Ֆոնդային մասով՝ 3200,0 հազ. դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
ԱԴԱՄՅԱՆ Ա.Ա.			
ԱԹԻԿՅԱՆ Մ. Ա			
ԱՂԱԲԵԿՅԱՆ Կ.Վ			
ԱՓԻՑԱՐՅԱՆ Կ.Ն			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա. Ժ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Ա.Հ.			
ՀԱՄԲԱՐՅԱՆ Հ. Հ			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ.Հ.			
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ.Ս			

ԱՐԵՎԱՇՈՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ